

Գ Ր Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ

ՀԱՅ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ ժողովուրդը, որպես աշխարհի հնագույն և ստեղծագործող ժողովուրդներից մեկը, հարուստ ութանկարժեք ժառանգություն է թողել հոգոր մշակութիւնի գրեթե բոլոր ասպարեզներում։ Գիտական հետազոտությունները պայմանական են սփոռում հայ ժողովուրդի ստեղծագործական ուղղություն վրա և ցույց տալիս այն թանկարժեք ավանդը, որ նա մուծել է համաշխարհային կուտուրայի գանձարանը։

Հայ ժողովուրդի կուտուրական հարուստ ժառանգությունը, պետք է ասել, որ բավականաշատ ուսումնասիրված է։ Սակայն իթե կա հոգեոր մշակութիւն մի ճյուղ, որը, համեմատաբար, քիչ է ուսումնասիրված, այդ հայ թատերական արվեստի հազարամյակներ ընդգրկող հարուստ պատմությունն է։ Այդ պակասությունն է, որ առիթ է տվել բանասիրական որոշ շրջաններում տարածելու այն սխալ կարծիքը, թե իբր հայկական կուտուրան, այդ թվում և թատերական արվեստը, իր սկիզբն է առնում 4-րդ դարից (Ք. Հ.), Այսպիսով հոգեոր մշակութիւն այն ողջ հարըստությունը, որ ստեղծել էր հայ ժողովուրդը իր ծագման օրից մինչև 4-րդ դարը, գրվանի տակ էր գրվում։ Այստեղից պարզ է դառնում, թե ինչ կարեոր նշանակություն ունի հայ հին թատրոնի պատմության դիտական հետազոտությունը։

Պետք է նշել, որ այդ ուղղությամբ վերջերս գիտական լուսական լուսական ներդրում հանդիսացավ արվեստագիտական գիտությունների դոկտոր Գեորգ Գոյանի արժեքավոր մի աշխատությունը¹, որը նյութական կուտու-

¹. Գեորգ Գոյան, «Հին Հայաստանի թատրոնը, հատոր 1-ին, Մոսկվա, 1952 թ. (սուսաց լոգով)։ — Նույնի «Մինագարյան Հայաստանի թատրոնը», հատոր 2-րդ, Մոսկվա, 1952 թ. (սուսաց լոգով)։



բայի հուշարձանների, բանասիրության և լեզվաբանության հարուստ ավալների վրա հեղինակի կատարած տեալիան ու տքնացան ստեղծագործական աշխատանքի արգասիրն է հանդիսանում։

Գ. Գոյանը, հենվելով անառարկելի փաստերի վրա, հիմնականում, ապացուցում է հայկական ինքնուրույն, ինքնատիպ թատրոնի անընդհանուր գոյությունը՝ 2.000 տարվա ընթացքում։

Հեղինակի կարևոր հետազոտությունը մեծ նշանակություն ունի ոչ միայն հայկական արվեստի, այլ նաև ողջ Միջին Ասիայի հին թատերական կուտուրայի պատմության ուսումնասիրու-

թյան համար։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Զիվելեգովը՝ բարձր գնահատելով դոկտ. Գ. Գոյանի նշված աշխատությունը, գրում է. «Արվեստագիտական գիտությունների դոկտոր Գ. Գոյանի աշխատությունը ներկայացնում է նշանակալից ներդրում նաև Մովեսական Միության ժողովուրդների կուտուրայի ընդունությունը պատմության մեջ։ Այն բացահայտում է առվեստական բազմազգ կուտուրայի պատմական խորը արժաները՝ ցուցադրելով ՍՍՌ ժողովուրդների կուտուրական դարացման վեհությունը դեռևս հեռավոր պատմական անցյալում...»²։

Ավելորդ շեր լինի դոկտ. Գ. Գոյանի ուշագրավ աշխատության մեջ զարգացված հիմնական դրույթների լուսական տակ ընթերցողի հիշողության մեջ վերակենդանացնել հայկական թատերական հարուստ կուտուրայի պատմական ակունքները։

². Գ. Գոյան, «Հին Հայաստանի թատրոնը, էջ 36։

Հայկական հին թատրոնի ծագման ակունքները պետք է փնտրել նախույն շըրջանում՝ գեռևս հայերի որպես ժողովրդի ձևավորման ժամանակաշրջանում։ Այդ շըրջանը, որ դոկտ. Գ. Գոյանը համարում է հայ թատրոնի նախապատմությունը, բնորոշ է ժողովրդական խաղերի և բնովթյան զարթոնքի, արևի և Արա Գեղեցիկի հեթանոսական պաշտամունքի թատերականությամբ։

Վաղ անցյալում Հայաստանի հողի վրա դրյություն է ունեցել գուանական ինքնատիպ թատրոն, որը բավականաշաք զարդարած է եղել և սերտորեն կապված կրոնապաշտամունքային արարողությունների հետ։ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»ի մեջ արժեքավոր հիշտակություն կա այն մասին, որ հայկական հին գուանաները ինքնաստեղծ երաժշտական գործիքի հրմանառների տակ իրենց երգերով, պարերով և երկայացնում էին իրենց նշանավոր նախների գործերը, պասկերեմ և գովերգելով նրանց սիրագրությունները¹։ Գուանական թատրոնը հող է պատրաստել թատրական արվեստի զարգացման համար։ տարգի նրան ինքնուրույնության և ինքնատիպության բնույթի։

Հին հունական նշանավոր պատմիչ Պլուտարքոսի վկայությամբ, Տիգրան Զ-րդը իր նվաճած հելլենիստական քաղաքներից Հայաստան բերեց շախաղանց շատ գերասաններ, որոնք չէին կարող բարերար ազգեցույուն չունենալ արքեն վաղող ի վեր Հայաստանում գործություն ունեցող գուանական թատրոնի զարգացման վրա։

Հայ ժողովուրդը հելլենիստական թատերական կուստուկան յուրացեց ինքնատիպորեն զարգացնելու հանապարհով՝ գընկալածը ենթարկելով ազգային կերպարանափոխման։

«Հայերը, — գրում է Գ. Գոյանը, — յուրացը ին անտիկ թատրոնը և օգտվում էին նրանից՝ ենելով իրենց շահերից, թատրոնը վերածելով հին Հայաստանի կուստուկայի օրդանական բաղկացուցիչ մասի։ Այլ խոսքով ասած, նրանք ստեղծեցին հելլենիստական թատրոն, այսինքն տեղական և հելլենական կուստուկայի յուրահատուկ զուգակցում, որի ինքնատիպության գծերը պարզուշ տեսանելի են հազարամյակների վարդուրի միջից։²

53 թվականին (Ք. Ա.) Հայաստանի մայրաքաղաք Արտաշատուամ բեմադրվել է հուն հունական դրամատուրգ Եվլիփիդեսի Թագուարությունը, 1913 թ., գիրք Ա, գլուխ 6, էջ 27։

1. Տե՛ս Մովսես Խորենացի, «Պատմութիւն Հայոց», Տփկիս, 1913 թ., գիրք Ա, գլուխ 6, էջ 27։

2. Գ. Գոյան, «Հին Հայաստանի թատրոնը», էջ 55։

Ժողովուրդների թատրոնների պատմության մեջ մեզ ստուգ հայտնի առաջին ներկայացուամքն է Նշանակում է 2.000 տարի առաջ մեր Հայրենիքում արդեն բարձր զարգացման է հասած եղել թատերական արվեստը։ Մինչև վերջերս հայ ժողովրդի կուլտուրական կյանքում անեղի ունեցած այդ կարևոր իրադարձությունը առանձին բանասիրների երկերում չէր գտել իր պատշաճ գնահատությանը։ Այսպես, տարածված է եղել այն սխալ կարծիքը, թե իբր «Բաքոսուհիներ»ը բեմադրվել է ի պատիվ պարթևների թագավոր Որոնդեսի որդու և Արտավազդի քրոջ ամուսնության։ Այնինչ այն բեմադրվել է հումեացիների դեմ տարած հաղթանակը նշանավորելու համար։ Այդ է պացուցում այն փաստը, որ գերասան Յասոնը, իրագործելով Արտավազդի մտադրության մեջ պահանջվող բռուտափրանը հետնյալ տողերը։ «Տոմ վերաբառնալով, մենք բերում ենք լեռներից նոր սպանված եղջերուն՝ բախտավոր մի որս»։ Եվլիփիդեսի «Բաքոսուհիներ»ի բռվարդաբերյալ բռվարդաբերյան իսորադնին ուսուասիրությունը և այն ներկայացման նկարագրության հետ բաղդատելը նոր լույս է սփռում Արտաշատուամ «Բաքոսուհիներ»ի բեմադրության վերաբերյալ Պլուտարքոսի արժեքավոր տեղեկության վրա։ Պարզվում է, որ հուն նշանարկոր դրամատուրգ կլասիկ ողբերգության ուժինուրական փայլուն մտահացումը Արտավազդի կողմից նպատակ է տնեցել բարոյական հարված հասցնել հայ ժողովութիւնի մեծ տառապանքներ հասցըրած հումեացիներին, ի դեմք հանել հոսմեացիների բանակի հանապանքներ առաջարկության մեջ ամրապնդել հայ ժողովրդի հավատը օտարերկրյա զավթիչների դեմ տարած պայքարուամ։ Այդ իրողությունը ակնառու ապացուց է թե ինչ ինչպիսի՝ մեծ դեր է խալացել թատրոնը հին Հայաստանի քաղաքական կյանքում։ Հայ բեմուամ, «Բաքոսուհիներ»ի բեմադրությամբ, անտիկ աշխարհի հանճարեղ դրամատուրգի անոմը սերտորին կապվում է հայ թատրոնի պատմության հետ։ Հայկական թագավոր Արտավազդը, Պլուտարքոսի վկայությամբ, գրել է ողբերգություններ, պատմական երկասիրություններ։

Հայկական հելլենիստական թատրոնի ուղերտուարը կազմված էր անտիկ կրասիկ դրամատուրգիայի (Եվլիփիդես և ուրիշներ) երկերից և հայկական օրիգինալ ողբերգություններից (Արտավազդ)։ Մենք ունենք Պլուտարքոսի արժեքավոր վկայությունը, որ դեռ մինչև «Բաքոսուհիներ»ի բեմադրություն-

նը Արտաշատում, այստեղ ներկայացվել են ազելինիստական շատ ներկայացուամները: Այն փաստը, որ Արտավազդից հետո և Արտաշատի Թատրոնը շարուակել է իր գոյությունը, ցուց են տավիս հին Արմավիր քաղաքի մոտ հայտնաբերված արձանագրությունները: Այդ արձանագրությունների ուսումնասիրությունը ակադեմիկոս Յա. Ի. Սմիրնովին համգեցրեց այն եղբակացության, որ նրանց մեջի մեջ, ամենայն հավանականությամբ, մենք ունենք Արտավազդի ողբերգություններից մեջի տողերը:

Մեզ հայտնի է, որ առաջին հայկական թատրոնի շենքը կառուցվել է Տիգրանակերտում 69 թվականին (Ք. Ա.): Տիգրանի որդի Արտավազդը շարուակելով հոր գործը, Արտաշատում ստեղծեց Հայաստանում երկրորդ հելլենիստական տիպի թատրոնը:

Հայ թատերական արվեստի պատմությանը նվիրված աշխատության հեղինակը՝ Գ. Գոյանը հին Հայաստանում գուսանների թատրոնի առկայությունը ցուց տարւ համար օգտվում է ինչպես հնագույն դրավոր տեքստերի, այնպես էլ լեզվաբանության տվյալներից: Այսպիս, նա «գուսան» բառի իմաստի բացահայտման հիման վրա, ցուց է տալիս, որ հին Հայաստանում այդ բառը նշանակում էր ոչ թե «աշուար», այլ ամիմոս: Այդ բառի գործածումը հայոց լեզվում ապացուց է հին Հայաստանում գուսանական արվեստի առկայության: Մովսես Խորենացու վկայությամբ գուսանները երգում, պարում էին բամբիների նվազակցությամբ. բացի երաժշտական այդ գործիքից, հին Հայաստանի բնակիչները օգտվում էին նաև քնարից, տավիղից, վինից, սրինգից, փողից, շեփորից, թմբուկից, ծնծղայից և այլն:

Հետաքրքրական է, որ հոմական ամիմուրառուի գործածությունը հայոց լեզվում գուրս չի մղում «գուսան» բառը, որը համիմաստ նշանակություն ուներ վերջինիս հետ: Հին հայերենուա «փարձակ» բառի գործածումը ակնառու ապացուց է հին Հայաստանում մոնշ դերասանունիների առկայությանը, որոնք, ինչպես ցուց են տալիս նյութական կուտուրայի հուշարձանները, ովքուվ հետ չին մնում: Աթենքի և Հռոմի դերասանունիներից: Դժբախտաբար, այդ մասին քիչ տեղեկություններ կան գրավոր հիշատակարաններում: Մովսես Խորենացին վկայում է, որ կար նազենիկ անունով մի վարձակ, որ տերգում էր ձեռքերով:

Հայ հին թատրոնի պատմության նվիրված աշխատության հեղինակը, Հայաստանի տարբեր վայրերում կատարած պեղումների ժամանակ հայտնաբերված բազմաթիվ բրոնզյա արձանիկների տառամասիրության հիման վրա, եղբակացնում է, որ դրանք

պատկերում են գուսան-միմուսներին, ձայնարկումներին, նրանց խմբերի ներկայացումները հայկական հելլենիստական թատրոնի բնույթը:

Այն փաստը, որ հին Հայաստանում ամիմուա բառը հայերենուա արտահայտված է ոչ թե հումարկենից փոխառնված «միմոս», այլ գուսան» բառով, իսկ պատմեդիան՝ «կատակերգություն», տրավեդիա»՝ «ողբերգություն» բառերով, ցայտուա կերպով՝ արտահայտուա է հայ հելլենիստական թատրոնի ինքնուրույնությունն ու ինքնատիպությունը:

Հին Հայաստանուա զարգացած են եղել կոմեդիան և սատիրան: Այդ մասին է խոսում հին հայերենուա այնպիսի բառերի գործածումը, ինչպիսիք են՝ «կատակաֆիա» և «կատակերգակ», «կատակերգությա», «կատակագության» և այլն: Հին հայերենում «ձայնարկություն» ամիմուա բառը նշանակել է «ողբերգակ». Զախարկու գուսանները գովերդությունները, որոնք նա կատարել էր իր կենդանության ժամանակ, ողբում կորստի առթիվ, միմիթարում մահացածի հարազատներին: Այդ մասին վկայում են հայ պատմիշները: «Զայնարկու», «ձայնարկու գուսան» բառերի գործածությունը հին հայերենուա իմբնին խոսում է հին Հայաստանում ողբերգակ թատրոնի առկայության մասին:

Այդ միտքը հաստատում են ո՛չ միայն մեր գրավոր հին տեքստերը, լեզվաբանությունը, այլև հնագիտության տվյալները: Պեղումների ժամանակ հին Հայաստանի տարբեր վայրերում գտնվել են մեծ քանակությամբ արձանիկներ, տրոնց խորազնին ուսումնասիրությունը ցուց է տալիս, որ նրանք պատկերում են ողբերգակ գուսաններին: Օրինակ, այդպիսին են Արմավիրում գտնված մարդկային կերպարանքներ պատկերող ոսկյա մետալիտները: Հետաքրքրական է նշել, որ հին պատմիշների մոտ տղբերգակ» նշանակելիս է եղել ո՛չ միայն ողբերգության դերասան, այլև նրա հեղինակը:

Հայ հին թատրոնի պատմության նվիրված աշխատության հեղինակը այն միտքն է հայտնում, որ Հայաստանի հելլենիստական թատրոնում բեմադրությունները տեղի էին ունենում ո՛չ միայն հումարեն, այլև հին հերեն լեզվով:

Հայ հին թատրոնի պատմության համար կարևոր է պարզել, թե մինչև 5-րդ դարը գոյություն ունեցել է արդյոք հայերեն լեզվով գոր առնված դրամատուրգիա, հայկական գիր, գրականություն: Գ. Գոյանը իր աշխատության մեջ բերելով քաղվածքներ 5—7-րդ դարերի հայ գրավոր աղբյուրներից, եղբակացնում է, որ դեռ մինչև Մեսրոպ

Մաշտոցը գոյություն է ունեցել Հայերեն լիդ-վով գրականություն։ Նա գոնում է, որ հայերը իրենց մտքերն արտահայտում էին հայերեն լիզվով՝ օգտվելով հոնական, պարսկական և այլ օտար լեզուների տառերից; և որ հայ հին պատմիների երկերում հանդիպող այն ասուլիները, որոնց մեջ նշվում է, որ տեսքութերը գրվում էին հում կամ պարսկական «գրով», վերջին բայցը պետք է հասկանալ ո՞ւ թե ո՞ւ լիզվով», այլ՝ «տառերով» նշանակությամբ։ Իր միտքը հաստատելու համար նա հնավում է նաև պեղումների ժամանակ հայտնաբերված այն արձանագրությունների վրա, որոնք գրված են հայերեն լիզվով, բայց օտար այրութենի տառերով։ Այս ամենից հետո Գ. Գոյանը անում է այն Խթադրությունը, որ մինչև 5-րդ դարը գոյություն է ունեցել հայերեն լիզվով գրի առնված դրամատուրգիա, ինչպես օրիգինալ, այնպես էլ թարգմանական։

Գ. Գոյանի բարձրացրած հարցը կարևոր նշանակություն ունի հայ թատրոնի և առհասարակ հայ մշակույթի պատմությունը և սուսանասիրերու համար և պետք է գրավի բանասերների, լիզվարանների, հնագետների. ուշագրությունը։

Հայ հին թատրոնի պատմության ուսումնասիրության համար կարևոր աղբյուր են հանդիսանում Հովհանն Մանդակումի կաթողիկոսի (478—490) երկերը, որից պարզվում է, որ 5-րդ դարի Հայաստանի թատրոնները գործելիս են եղել «ամեն ժամ», «ամեն օր», և որ թատերական արվեստը լայն տարածում էր գոյել հին Հայաստանում։ Հայոց հայրապետի գրավոր հիշատակարանից երևում է, որ ներկայացումները բեմադրվել են թատրոնի համար կառուցված հատուկ շենքերում։ Այդ մասին է խոսում նաև այն, որ մին հայերեն լիզվում արմատացել էր պատերատեած բառը։ Այս ամենը ակնառու կերպով հերքում են Գ. Զարբհանլյանի այն կարծիքը, թե միշնադարում հայ թատրոնը զարգացած չի եղել, չի ունեցել իր հատուկ շենքը, կարծիք, որ արտահայտել էն նա իր «Հայեական հին դպրության պատմություն» աշխատությունում։

Զարգացած թատերական արվեստի առկայությունը հին Հայաստանում ինքնին խոսում է այդ ժամանակաշրջանում նկարչական ու քանդակագործական արվեստի զարգացման մասին, առանց որի չէր կարող գոյություն ունենալ թատերական դեկորացիոն արվեստը։ Եվ իրոք, հայ նշանավոր պատմիչ Եղիշեն, իր «Վարդանանց պատերազմը» աշխատության մեջ, վկայում է, որ հայ նախարարների կանայք խորը վիշտ ապրելով այն տոմիվ, որ իրենց ամուսինները գերի էին վերցվել պարսիկների կողմից, սրբությամբ

պահպանում ու պաշտում էին իրենց ամուսինների նկարներն ու արձանները։ Մեզ են հասել Տիգրանի և Արտավազդի նկարներով արծաթյա և պղնձյա դրամներ, ոսկյա մեղավորներ, որոնց վրա նորք կերպով պատկերված են արմավիրյան ողբերգակները։ Այս ամենը որոշակի պարզություն է մտցնում Վրաբաններ Քերթողի (6-րդ դարի վերջը՝ 7-րդ դարի սկիզբը) այն մտքի մեջնաբանության մեջ, թե իրը այդ շրջանում հայերը չեն կարողանում պատրաստել նկարներ և դրանք ներմուծված էին Հովհաննանից։ Տարակույս չկա, որ Կոթաննես Քերթողի մոտ խոսքը այն սրբանկարների մասին է, որոնք րիբում էին Հովհաննանից։

Որ նշված ժամանակաշրջանում հին Հայաստանում զարգացած են եղել նկարչությունը ու քանդակագործությունը, այդ մենք իմանում ենք նաև «Ցովհաննու իմաստասիրի Օձնեցոյ մատենագրութիւնք, նորին ընդդեմ պատղիկեանց» աշխատությունից, որի մեջ կա հավաստի տեղեկություն, որ հայերը գրավում էին և քանդակագործությամբ, և նկարելու արվեստով։ Պեղումների ժամանակ հայտնաբերված նյութական կուտարայի հուշարձանները ցույց են տալիս, որ հայ քանդակագործությունն ու նկարչությունը գործում են ունեցել առնվազն մեր թվարկությունից առաջ 1-ին դարից սկսած։

Հայ մատավոր մշակույթի, այդ վկում և հայ թատերական արվեստի գիտական պատմության ստեղծման համար կարևոր աղբյուր է նաև հայ նշանավոր մտածող Դավիթ Քերպականի տեսական ժառանգությունը, որի խորագին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեռևս խորը միջնադարմ հայ էսթետիկական միտքը համել էր այնպիսի բարձրության, որ գոնում էր, թե արվեստը կատարելագործության և հավերժագույնության պարմանն է հասարակությանը սպասարկելու։ Այս արվեստը, որը չի ծառայում հասարակությանը, չի կարող մնայուն լինել և շմահանալ, և ընդհանրապես, գեղարվեստական երկը կատարյալ է և անօմահ, իր այն ժառայում է հասարակությանը, նպաստում է նրա հոգևոր զարգացմանը։

Որ իրոք միջնադարի ամրող ընթացքում Հայաստանում գոյություն է ունեցել թատերական արվեստը, վկայում են նյութական կուտարայի հուշարձանները։ Դոկտոր Գ. Գոյանի արժեքավոր աշխատության մեջ այդ հուշարձաններից բերված են մեծ քանակությամբ նմուշներ։ Հայ թատրոնի պատմության համար բացառիկ կարեւոր նշանակություն ունեն Աղթամարի տաճարի պատերին պատկերված թատերական դիմակները, որոնք արտահայտելով մարդկանց արտաքին դիմագծերի բազմագանգությունը, գաղափար

հն տալիս հին Հայկական թատրոնի հարուստ ուսպերտուարի մասին: Աղթամարի տաճարի պատերին փորագրված կենդանիների դիմակները, որոնք հիշեցնում են հին Հայկական մանրանկարչության վրա պատկերված պարող գուսանների գլխիվներին դրված դիմակները, կտում հայտնաբերված մեր թվարկությունից առաջ 8-րդ դարին վերաբերող բրոնզե մանրանկարի վրա թոշովների և արջերի դիմակներ կրող մարդկանց պատկերները, պերճախոս կերպով խոսում են, թե ինչպիսի՞ վաղեմի պատմություն տմի հայ թատրոնը:

Քանդակագործի կողմից Աղթամարի տաճարի պատերին մարդկանց դիմագծերի հարուստության պատկերումը խոսում է հայ հին քանդակագործական բարձր արվեստի, ինչպես և այն մասին, որ հին Հայաստանում անընդհատ գործելիս է եղել իր ժամանակին դարձացման բարձր մակարդակի վրա կանգնած թատերական արվեստը: Այդ հուշարձաններից մենք իմանում ենք, որ գերասանները հանդես են եկել հատուկ կերպով պատրաստված դիմակներով և թատերական հագուստով:

Միջնադարից մեղ են հասել մեծ քանակությամբ մանրանկարներ, որոնք օգնում են մեզ լուս սփռելու հին Հայկական թատրոնի այնպիսի մանրամասնությունների վրա, ինչպիսիք են քերասանների հագուստը, գըլիարձները, դիմանկարները և թատերական այլ իրեր: Միջնադարի հայ նշանավոր մանրանկարիշների վրձինի տակ պայծառությամբ

կենդանություն է ստացել գերասանների հոգեկան աշխարհը, որը իր դրսեռորուն է գտնել պատկերված դիմասանների դիմափառդի, դեմքի շարժումների մեջ: Վերջիններս համայն գործածել են երկակի, եռակի դիմքեր պատկերող դիմակներ, որոնք նրանց հնարավորությունն են տվել միաժամանակ խաղաղութիւնի գաղաքականի դիմքեր:

Մենք ներկա հոգվածում համառոտակի փորձեցինք շարադրել արվեստագիտական գիտությունների որկուոր Գ. Գոյանի աշխատության հիմնական դրույթները, որը ընդգրկում է հայ թատրոնի քանդարյա պատմության միայն առաջին կիսը: Գ. Գոյանը իր մենագրության վերջում տալիս է նաև ժնախնական հաղորդուաններ, որի մեջ տըրված է հայ թատրոնի գոյության երկրորդ հազարամյակի համառոտ ուրվագիծը:

Գ. Գոյանի ներկա աշխատությունը արժեքավոր ներդրում է հայ արվեստի, այդ թվում և թատերական կովուուրայի պատմության մեջ: Այդ աշխատությունը ընթերցողին պատկերում է հայ ժողովրդի դարավոր կովուուրայի հարուստ պատմությունը: Գոյանի այս աշխատությունը միաժամանակ ցուց է տալիս, թե ինչպիսի՝ նշանակալից հաջողությունների կարող է հասնել գիտնականը՝ երբ նպաւական, մեղվազան, ստեղծագործական աշխատանք է կատարում նյութական կովուուրայի հուշարձանների և հնագույն դրավոր աղբյուրների վրա:

ԲԱՆԱՍԵՐ

